Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-045-03.07.2017,29.09.2017-ՊԻՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասի «ժա», 4-րդ մասի «դ» եւ 5-րդ մասի «բ» կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետից հանել «, ինչպես նաեւ որոշակի արտոնությունների հատկացման» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասի «ժա», 4-րդ մասի «դ» եւ 5-րդ մասի «բ» կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի ~~4-րդ պարբերության~~ *4-րդ մասի* «բ» կետից հանել «, ինչպես նաեւ որոշակի արտոնությունների հատկացման» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	«4-րդ պարբերության» բառերը փոխարինել «4-րդ մասի» բառերով՝ նկատի ունենալով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է